ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Հաստատված է

«ՎԻՆՆԵԹ Հայաստան»
Կանանց Ռեսուրս կենտրոնների Ցանցի
6-րդ ընդհանուր ժողովի որոշմամբ
22.06.2019թ

Էթիկայի կանոնների և շահերի բախման ընթացակարգ

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիննեթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիննեթ Հայաստան» կոալիցիան և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

WINNET ARMENIA

«Վիննեթ Հայաստան կանանց ռեսուրս կենտրոնների ցանց» ՔՀԿ կոալիցիայի էթիկայի կանոնները

Սույն Կանոնները սահմանում են այն հիմնական սկզբունքները և ակնկալիքները, որոնք ուղղորդում են «Վիննեթ Հայաստան կանանց ռեսուրս կենտրոնների ցանց» ՔՀԿ կոալիցիայի(այսուհետև՝ ՎԻՆՆԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ) անդամ ցանկացած կազմակերպության վարքագիծը:

Կանոնների նպատակներն են՝

- Ազնիվ և էթիկական վարքագծի խթանում,
- Ցանցի ներքին ընթացակարգերի և կագավորումներին համապատասխան գործունեության խթանում,
- Հաշվետվություններում և օրենքով պահանջվող այլ փաստաթղթերում ամբողջական, հստակ և ժամանակին բացահայտումների կատարում;
- Օգնել տեղեկանալ և լուծել էթիկական հարցեր, ինչպես նաև ներքին կանոնների և կարգավորումների և օրենքների հավանական խախտումներ;
- Խթանել ՎԻՆՆԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ-ի ազնիվ, ամբողջական և հաշվետվողականության մշակույթը:

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Ազնիվ աշխատանքային վարքագծի և էթիկայի սկզբունքների պահպանման մեր հավատարմությունը հիմնված է մեր արժեքների վրա, որոնք հիմքային են՝ որպես ՎԻՆՆԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ-Ի էությունը և վարքագիծը սահմանելու համար: Մեր արժեքները ներառում են ազնիվ և պատասխանատվության վրա հիմնված գործելակերպը, արժանապատվությունը և հարգանքը՝ անհատական և կորպորատիվ մակարդակով: Թափանցիկության ապահովում բոլոր մակարդակներում ազնիվ և բաց հաղորդակցության և հաշվետվողականության միջոցով և օպերացիոն գործունեության շարունակական բարելավում:

Մեր գործողությունները ուղղորդվում են արժեքներով: ՎԻՆՆԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ-Ի բոլոր անդամներից ակնկալվում է իրենց աշխատանքի ընթացքում պահպանել և աջակցել հետևյալ արժեքները՝

- Համագործակցություն,
- Փոխվստահություն,
- Արժանապատվություն,
- Հարգանք,
- Պատասխանատվություն,
- Հանդուրժողականություն,
- Թափանցիկություն և հաշվետվողականություն

Ով պետք է հետևի Կանոններին

ՎԻՆՆԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ-Ի բոլոր անդամները, ինչպես նաև Ցանցի Համակարգող Խորհուրդը պարտավոր են իմանալ և հետևել Կանոններին:

Զեկուցման պարտականություն

ՎԻՆՆԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ-ը խթանում է բաց և դրական աշխատանքային միջավայր և խրախուսում է Ցանցի բոլոր անդամներին ներկայացնել ցանկացած հարց, ինչպես նաև հայտնել մտահոգություններ՝ կապված ներքին քաղաքականության կամ ընթացակարգերի հնարավոր խախտման վերաբերյալ: Ցանցի անդամ կազմակերպությունների պարտականությունն է հանդիսանում բարեխղճորեն և պատշաճ ժամկետներում զեկուցել ցանկացած այսպիսի խախտում, ինչպես նաև օժանդակել բացահայտել ցանկացած հնարավոր խախտումներ մինչ դրանք կարող են հանգեցնել Կանոնների խախտման:

Զեկուցման ենթակա խախտումներ

Զեկուցման ենթակա խախտումները ներառում են, սակայն սահմանափակված չեն՝

- Շահերի բախում,
- Խտրականություն կամ հետապնդում,
- Խարդախություն,
- Կաշառք և կասկածելի հաշվապահություն,
- Ներքին վերահսկումներ և աուդիտի վերաբերյալ հարցեր,
- Ցանցի հրապարակման ենթակա փաստաթղթերում բացթողումներ կամ անճշտություններ,
- Սույն Կանոնների, Ցանցի ներքին ընթացակարգերի կամ օրենքների հետ այլ անհամապատասխանություններ:

Ցանցի անդամ յուրաքանչյուր կազմակերպություն, որևէ ֆինանսական գործողության ազնվության վերաբերյալ կասկածի հիմքեր ունենալու կամ ոչ պատշաճ և արգելված գործողությունների առկայության մասին կասկածելու դեպքում, պետք է այդ մասին տեղեկացնի ՎԻՆՆԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ-ի քարտուղարությանը և Համակարգող Խորհրդին:

Քանի որ Ցանցը ակտիվորեն բաց է հասարակության առջև, ուստի անդամ կազմակերպություններից պահանջվում է պահպանել էթիկական բարձր չափանիշները և պրոֆեսիոնալ պահվածքը:

ՎԻՆՆԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ-ի անդամ կազմակերպությունը ցանցին միանալու դեպքում, իր ստորագրությամբ հաստատում է « ՎԻՆՆԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ-ի Ցանցի աշխատանքի ժամանակ էթիկական նորմերի պահպանման համաձայնագրին ծանոթանալու փաստը:

Խստիվ արգելվում է Ցանցի գումարների ու գույքի օգտագործումը ոչ օրինական և ոչ պատշաճ գործողություններում:

Ցանցի անդամ կազմակերպություններին արգելվում է առաջարկել, պահանջել կամ ընդունել գումարներ կամ այլ վճարներ, օրինակ՝ գույք, զեղչեր կամ այլ օգուտներ՝ արտոնյալ դիրք ապահովելու, բարենպաստ պայմաններ ստեղծելու, որոշակի որոշման վրա ազդելու և այլնի դիմաց:

Գումար տալու կամ վերցնելու առաջարկ, ինչպես նաեւ նման առաջարկի փորձ կատարելը, անկախ վճարման օրինական լինելուց, բերում է կարգապահական պատժամիջոցների կիրառմանը, այդ թվում նաև Ցանցից հեռացման: Նման գործարք թույլ տալը կամ դրան նպաստելը նույնպես բերում է կարգապահական պատժամիջոցների կիրառմանը, այդ թվում նաև Ցանցից հեռացում:

ՎԻՆՆԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ-ի անդամ կառուցները ցանցի գործունեության հետ կապված իրավունք ունեն ընդունել ոչ թանկարժեք նվերներ այն դեպքերում, երբ նվերը համարվում է քաղաքավարության դրսևորում կամ ընդունված վերաբերմունքի նորմ, կամ երբ ակնհայտ է, որ նվեր վերցնելը չի նշանակում շնորհակալական բնույթի որևէ գործողություն, հատկապես Ցանցի ծրագրային գործունեության հետ կապված: Եթե աշխատակիցը նվերի պատշաճ լինելու մասին կասկածներ ունի, ապա նա պետք է քաղաքավարի ձևով հրաժարվի այն ընդունելուց:

ՎԻՆՆԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ Ցանցին ոչ հարիր գործողությունների օրինակներ են նաև՝

- Աշխատանքի հետ կապված որևէ ելույթի, խորհրդակցության կամ որևէ այլ գործողության համար անձնական վճար ստանալը:
- Ցանցի շահերի ներկայացնելը այնպիսի ֆինանսական գործողության մեջ, որտեղ անձնական շահ ունեն Ցանցի անդամ կառուցների աշխատակիցները կամ որևէ աշխատակցի հարազատները:
- Ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ցանցի, անդամների կամ ցանցի կողմից աջակցություն ստացող անձանց ու կազմակերպությունների համար անցանկալի, վնասակար կամ մրցակցային գործողության մեջ:

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

ՎԻՆՆԵՏ ՀԱՅԱՍՏԱՆ Ցանցի բոլոր որոշումները պետք է ընդունվեն միայն խելամիտ դատողության հիման վրա: Ցանցի անդամները պարտավորվում են մշտապես գործել Ցանցի լավագույն շահերից ելնելով, իրենց կազմակերպությունների կամ մասնավոր նկատառումների, հարաբերությունների ազդեցությունից զերծ: Ցանցի անդամներից ակնկալվում է խուսափել այնպիսի իրավիճակներից, որտեղ նրանց անձնական շահը կարող է բախվել, կամ նույնիսկ արտաքնապես որպես բախում դիտվել ՑանցիԻ շահերի հետ:

Շահերի բախումը ի հայտ է գալիս, երբ Ցանցի անդամ կազմակերպությունը ունի անհատական կամ մասնավոր շահ, որը խոչընդոտում է կամ կարող է խոչընդոտել աշխատանքի կատարումը՝ օբյեկտիվ, արդար և էթիկայի նորմերի շրջանակներում:

Շահերի բախման մեծ ռիսկեր պարունակող իրավիճակներ

Որոշ իրավիճակներ ստեղծում են շահերի իրական կամ հնարավոր բախման առավել մեծ հնարավորություն: Նման իրավիճակների ծագման դեպքում Ցանցի անդամ կազմակերպությունները պետք է տեղյակ լինեն և գործեն զգուշությամբ: